



Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N 51

ք. Արտաշատ

23 02 2017թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N 105 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.13 կետերով՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ավտոճանապարհներին հարող տարածքներում կուտակված աղբի մաքրման աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ 1-ամսյա պարբերականությամբ ներկայացնել տեղեկատվություն:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 1-ի <<Հանձնաժողով ստեղծելու մասին>> N 105 կարգադրությունը:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ